



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9906

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴԻ ԵԵԿ

ՕՏԱՐ ԲՈՂՔԻ ԽԱՐԱՀԱՅԻ

(Առաջնահանձ օրուական պատճենի)

Թուս, բարգմ. Տ. Յավիտիսիսան

391. 71
L-57

ԹԻՖԼԻՍ

առիպ. ՄՆ. Մարտիրոսյանց
Պաշտպանական փողոց, № 12.

1903.

17 JUL 2006

№ 1.

299

ԼԵՕՆԻԴ ԱՆԴՐԵԵՎ

891-71

4-57

ար.

1006
29186

ՕՏԱՐՈՒՅՔ ԳՐԻՎ

(Առաջնական համարը՝ պատճենի համարը՝ գույքը)

Առաջ. բարզ. Տ. Յովհաննեսիս



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի

Պուշկինեան փողոց, № 12.

1903.

53-10/11-2

15.108
42-X

12. 02. 2013

9906

19 NOV 2010

Օ Տ Ա Ր Ա Զ Գ Ի Ւ



5
Дозволено цензурою. Тифлисъ, 28 Мая 1903 г.

Ուսանող Զիստեակօվը առաւօտեան ժամը տասնմէկից մինչև երեկոյեան ութը զբազուած էր զանազան աներում դասեր տալով, իսկ համալսարան գնում էր միայն շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երբ պարապմունքները աշակերտների հետ՝ ուշ էին սկսում, այն էլ միայն մի բոպէով, որպէս զի պէղէլլը անունը նշանակէր դասախոսութիւն յաճախողների ցուցակում: Դասախոսութիւններին նա երբէք չէր յաճախում և նոյն իսկ շը գիտէր, թէ որաեղ էին գտնւում երկրորդ կուրսի իրաւաբանների լսարանները, որովհետև սաստիկ չէր սիրում պրօֆեսսօրներին և մտադիր էր առաջիկայ դարնան ընդմիշտ գնալ արտասահման ու այնտեղ ապրել և ուսնել: Հէնց այդ էր պատճառը, որ այնքան աշխատանք էր յանձն առել, և այդ նպա-



տակով էր, որ փող էր յետ զցում, իսկ երեսները, դասերից վերադառնալուց յետոյ, նստում էր ու գերմաներէն սովորում: Վըձռել էր գնալ Գերմանիա, Բեռլին: Մի տարուց ի վեր այնտեղ ապրում էր նրա հին ընկերներից մէկը, որ շուտ-շուտ երկար ու ոգեստած նամակներ էր գրում և իւրաքանչիւր նամակում յորդորում էր նրան, որ նոյնպէս գնար Բեռլին:

Բայց երեմն-երբեմն երեկոները Զիստեակօվի զլիսում ինչ որ բան աղմկւում էր՝ ջրաղացի անուի վրայից թափուող ջրի նըման, յոդնած աչքերի առջև նչոյին էին տալիս աշակերտների անախորժ դէմքերը, և սաստիկ ցաւ էր զգում ձախս կողքում: Այդ ժամանակ այլ ևս անկարելի էր պարապել, և նա կամ պառկում էր անկողնում և սկսում հաշւել կիտած փողերը ու երազել իր ապագայ բեռլինեան կեանքի մասին, կամ գնում էր ներքն, վաթսունչորսերորդ համարը, ուր երեկոները սովորաբար հաւաքւում էին իր կեցած համարներում, «Հիւսիսային Բեռնումն, ապրող ուսանողները: Նա չէր սիրում այնտեղ հաւաքւող ուսանողներին, ինչպէս առնասարակ չէր սիրում իր շուրջը գտնուող ու կատարուող ամեն ինչ, — այն փողոցները, որով գնում-գալիս էր, այն սենեակը, որ-

տեղ ապրում էր և առնասարակ այդ ամբողջ անկարգ-անկանոն, քաօսային, բարբարոսավարի կոսկիտ և անհեթեթ կեանքը: Նոյնիսկ բարբարոսներից էլ վատթար էին թւում նըրան իր տեսած բոլոր մարդիկը, թէ փողոցներում և թէ տներում, — բարբարոսները իիրզախ մարդիկ էին, իսկ սրանք լոկ չէին յարգում ոչ իրանց, ոչ ուրիշներին, և յաճախ երեան էր գալիս նրանց մէջ բութ բռնութեան և տիսմար անզիտութեան սոսկալի ուրուականը: Բայց այն գիտակցութիւնը, որ ինքը ընդ միշտ հեռանալու է նրանցից և շուտով տեսնելու է ուրիշ մարդիկ, լաւ մարդիկ, և ապրելու է օրինաւոր ու բարի կեանքով, — հաշտեցնում էր նրան մնացող մարդկանց հետ և տարօրինակ թափիծ ու մեղմ կարեկցութիւն էր զարթեցնում նրա սրտում: Եւ երբ նա գնում էր նրանց մօտ իր բարձր հասակով, իր նեղ ու հիւանդոտ կրծքով, ճըգ-նաւորի անարիւն դէմքով և տենդայնօրէն փայլող աչքերով, նրա յուշիկ քբարե՛ ձերգ-ը հնչում էր իբրև ախուր հրաժեշտի սղջոյն:

Իսկ ներքեսում, վաթսունչորսերորդ համարում, միշտ տիրում էր անհոգ ուրախութիւն ու աղմուկ: Այնտեղ սաստիկ շատ գարեջուր էին խմում ու ծխում, երգում ու գոռղոսում և քնում էին և տախտակամածի,

և բազմոցների վրայ, ուստի և օդը կապտաժեռ էր ու ծանր, տողորուած գինողու (սպիրտ) և տառեխի հոտով, և ամեն բանում տիրում էր այնպիսի յարատե ու անյաղթելի անկարգութիւն, որ Զիստեակօվին երթեմն թւում էր, թէ այդ էլ մի առանձին տեսակ կարդ է:

Սենեակի տէրերն էլ, Վան'կա Կօստիւրինը և Պանովը՝ շատ նման էին իրանց սենեակին, — նոյնպէս անկարգ և նոյնպէս անկարգութիւնը օրէնք դարձրած, նրանք առաւտեան թէյի տեղ օղի կամ դարեցուր էին խմում, զիշերները լուսացնում էին, իսկ ցերեկները քնում:

Շատ քիչ գոյք ունէին նրանք, բայց պատուհանների վրայ միշտ շարուած էին լինում՝ զանազան մեծութեան դատարկ շիշեր և մի լաւ դաշնակարան (հարմօնիում), իսկ պատի վրայ՝ մի դափ և մի եռանկիւն։ Այն ժամանակից ի վեր, երբ նոյն համարներում ապրող մի ուսանող, սերբ Ռայկօ Վուկիչը, մի զիշեր դափին առած անցուդարձ արեց միջանց ում և սարսափելի վախեցրեց բոլոր կացողներին, որոնք դուրս պրծան սենեակներից՝ կարծելով թէ տունը կրակ է ընկել, — սպասաւոր Սերգեյը ամեն երեկոյ ժամը տառնը մէկին դալիս, դափը տանում էր մինչեւ

միւս առաւտօտ, իսկ առաւտօտեան յետ էր բերում՝ երկու շիշ գարեջուր էլ հետը, և երկարաբեխ Վանկա Կօստիւրինը, որ առաւտօտները շատ մոայլ էր լինում, դափի ածելով մի կարճ ու մոայլ տաղ էր ասում։ Այնուհետև բարում էին դաշնակարանի հնչուն և ուրախ գեղգեղանքները — և սկսում էր անհեթեթ և Զիստեակօվի համար անհասսկանալի օրը։

Երբ երեկոյեան վախտունչորսերորդ համարն էր գալիս նեղկուրծք, հիւանդու Զիստեակօվը, վրան կրելով աշխատաւոր օրուայ և կենսական խիստ որոշ նպատակի հետքերը, ընկերական խումբը հանդիպում էր նրան թեթև հեգնութեամբ և անբարեացակամութեամբ։

— Օտարազգին գալիս է, — յայտարարում էր Վան'կա Կօստիւրինը։ Եւ ուսանողները ծիծաղում էին, որովհետև Զիստեակօվը՝ ամբողջ զէմքովը, երկար մազերովը և ուսանողական տնազգեստի (Եյշուրկա) տակից երեւացող կապոյտ վերնաշապկովը՝ ամենից քիչ էր նման օտարազգու։ Արտասանութիւնն էլ կատարեալ վելիկօոսական էր՝ փափուկ, կոկ ու մտածկոտ։

Ուսանողները նրան չէին սիրում այն պատճառով, որ նա բոլորովին անտարբեր էր վերաբերում նրանց կեանքին, չէր հասկա-

նում այդ կեանքի հրճուանքները և նմանում էր մի մարդու, որ երկաթուղու կայարանում նստած սպասում է գնացքին, ծխում, խօսում է, նոյն իսկ կարծես զրաւում է, բայց աչքը ժամացոլցից չի հեռացնում: Իր մասին ոչինչ չէր պատմում, և ոչ ոք չը զիտէր, թէ ինչու քսանինը տարեկան հասակում հագիւ երկրորդ կուրառումն է, բայց յաճախ և շատ մանրամասնօրէն խօսում էր արտասահմանի և արտասահմանեան կեանքի մասին: Եւ ուստի առաջին անդամը տեսնէր՝ մեղմ հրճուանքով կը պատմէր մի լուր, որ չը զիտեմ՝ որտեղ էր լսել և երբ, այն է՝ թէ Արիստիանիայի ամենալաւ հրապարակում ժողովուրդը երկու գեղեցիկ յուշարձան է կանգնեցրել Բեօնսօնին և իրաէնին նրանց կենդանութեան օրով, և Բեօնսօնն ու իրաէնը այդ հրապարակով անցնելիս տեսնում են անեղծ մետաղից շինած իրանց արձանները և այն քան խանդաղատում են ժողովրդական սիրոյ այդ ցոյցից, որ երկուսն էլ լաց են լինում: Եւ այդ պատմելիս՝ Զիստեակօվը հայեացը դարձնում էր մի կողմ, և աչքերը արտասուակալում էին ու կարմրում:

Սիրում էր նա խօսել նոյնպէս այն բանի մասին, թէ որքան փող է յետ ցցել արտասահմանի համար, այն է՝ երկու հարիւր

քսան ոռւրիի, և մի անգամ նոյնիսկ բոլոր ուսանողներին ձանձրացրեց զանգատուելով, թէ մի ընտանիքում լրբարար տասնմէկ ոռւրիւի կտրեցին նրա զասավարձից: Առանց այլ եալութեան վարձը կտրեցին. իսկ երբ սկսեց պահանջել, սկզբում ծիծաղեցին վրան, իսկ յետոյ դուրս արին:

—Արիւն-քրտինքով վաստակած փողերս կտրեցին,—ասում էր նա զայրոյթով ու թախիծով:—Որ լաւ հաշւենք, գուցէ դուրս դայ, որ երկու տարուայ կեանք եմ մաշել այդ փողը վաստակելու համար:

—Լաւ, հերիք է նուաս,—վրայ բերեց վան'կա Կոստիւրինը,—կուզես, մեր մէջ հաւաքենք քեզ համար ալդ տասնմէկ ոսւրին:

Կոստիւրինը պարզ սրտով առաջարկեց այդ և շատ զարմացաւ ու վիրաւորուեց, երբ Զիստեակօվը վրդովմունքով մերժեց իր առաջարկութիւնը:

—Ընկեր-տղայ չես,—ասաց Կոստիւրինը յանդիմանութեամբ, և ամենքը համաձայնեցին, որ Զիստեակօվը ընկեր-տղայ չէ:

Սյդ երկում էր նաև այն բանից, որ նա արհամարհական անտարբերութեամբ էր վերաբերում ուսանողական բոլոր շահերին, —ինչքան էլ կարեւոր բան պատահէր, որքան էլ տաքանային ամենքը վաթսունչորսերորդ հա-

մարում, նա լուռ կը մնար, մատներով մտքամոլոր կը դափահարէր սեղանը, իսկ եթէ վիճաբանութիւնները երկարէին, կը սկսէր յօրանջել ու վեր կը կենար, կ'երթար գերմաներէնով պարապելու:

— Ես այստեղի մարդ չեմ, —կ'ասէր՝ կատակի ձեռվ ներողութիւն խնդրելով, բայց նրա կատակում ինչ որ տարօրինակ և չը գիտեմ ինչու՝ վիրաւորական ճշմարտութիւն կար: Եւ միւսների համար անախորժ էր ըզդալ, որ իրանք ամեննին չեն ճանաչում այդ նեղկուրծք մարդուն, որ այդպէս ուղղակի դիմում է դէպի իր նպատակը և չի ուղում ասել, թէ որտեղից է այդքան ոյժ ու վճռականութիւն իր հիւանդու կրծքում: Նրան չէր սիրում մանաւանդ Վան'կա Կոստիւրինը: Սա բարձրածիտ կօժիկներ էր հազնում, ամառն էլ գիւղում եղած ժամանակ գիւղացավարի էր հազնում, սիրում ու յարգում էր ամեն ինչ, որ ոռւսական է, օղի, կվաս, իւղալի շշի ու մուժիկներին, և աշխատում էր խօսել կոպիտ ձայնով ու ուամկավարի, — կажется-ի տեղ կայիս էր ասում և շուտուտ գործ էր ածում ձաւեա բառը: Նա չէր հասկանում Զիստեակօվի յամառ ձգտումը դէպի արտասահման և չը գիտեմ ինչու՝ նրան դասում էր այնպիսի երեսյթների կարգը,

ինչպէս են՝ սպիտակ ձեռնոցները, երբէք չը գինովնալը, այցելութիւնները և նորատարագ կօշիկները: Զիստեակօվին բնորոշելու համար, բացի «ընկերուտղայ չէ» խօսքերից, նազործ էր ածում երկու մակղիր—արիստօկրատ և շան-ճրագ:

Միւսները անտարբեր էին վերաբերւում դէպի ամենն ինչ, որ ոռւսական է, յաճախ նոյնիսկ պախարակում էին զուտ ոռւսական բաները և ասում էին Զիստեակօվին, թէ իրանք էլ ուրախութեամբ կ'երթային արտասահման ապրելու և սովորելու, եթէ փող ունենային: Իսկ Զիստեակօվը յորդորում էր նրանց, ապացուցանում էր, թէ փող միշտ կարելի է գտնել, յուղում էր, բայց յետոյ ուշադրութեամբ նայում էր նրանց բարեսիրտ, կիսահարբած ռեխներին, յիշում էր նրանց մշտական ծոյլ ու զեղս կեանքը և անտարբերութեամբ լուսում էր մի անկիւնում, ճիւլտուած անկողիններից մէկի վրայ և այտեղից՝ վերին աստիճանի գունատ, նեղկուրծք ու վճռական՝ դիտում էր միւսներին իր փայլուն ու հեռուն նայող աչքերով:

Իսկ միւսները ուրախ զուարթ ապրում էին իրանց համար երիտասարդութեան ու առողջութեան անհոգութեամբ, կարծես թէ ոչ երէկ կար նրանց համար, ոչ էպուց, ոչ էլ

անիծեալ հարցեր, որ անիծեալ իրականութիւնը բերում է իր հետ: Լայնաթիվունք, մաղուս, հաստավիզ, մանրաջրանի ու բժահայեաց Տօլկաչօվը ցոյց էր տալիս մկանների ոյժը, կշռագրեր էր բարձրացնում և ամենքին ստիպում էր նայել ու հիանալ իր վրայ, —նա մարմնամարզական ընկերութեան անդամ էր, ոյժից զատ ոչինչ չէր ընդունում և բացէիրաց արհամարհում էր համալսարանը, ուսանողներին, գիտութիւնը և ամեն տեսակ հարցեր: Շատերն էլ նրան ատում էին, բայց վախում էին նրա վիթխարի ոյժից, նրա կոպտութիւնից, որ ոչնչի առաջ կանգ չէր առնում, և նոյսիկ յետեից չէին համարձակուում վատ խօսել նրա մասին: Եւ երբ որևէ մէկը, համբերութիւնը հատած, սկսում էր վիճել հետոք, միշտ այսպիսի խօսքերով էր սկսում վէճը.

—Ի հարկէ, ամեն մարդ իրաւունք ունի այս կամ այն համոզմունքն ունենալ, բայց կարծեմ դու, Կոստեա, սխալում ես...

Խակ նա այդպիսի նուրբ քաղաքավարութիւններ չէր հասկանում և առանց այլիսայլութեան վերջ էր տալիս վէճն:

—Արժէ միթէ ձեզ պէս յիմարների հետ վիճել: Եթէ ձեզ իրաւունքը ինձ տային, ամեն օր բոլորիդ էլ ախոռատանը ճիպոտով կը ծեծէի:

Եւ ամենքը ձևացնում էին, թէ նա կատակ է անում, ու ծիծաղում էին: Սենեակի տէրը, Պանօվը, սոխ էր չոթում տառեխի համար ու լաց էր լինում. Ռայկօ Վուկիչը, —մի ցածրահասակ սերբ՝ չոր, ջլուա, կորաքիթ, սուր ու երկճիւղ կզակով, որի վրայ բուսնում էր ծակճկող խողանաձև միրուք, ու կախ ընկած բեխերով, —լուռ նայում էր օղին, սպասելով, թէ երբ կածեն բաժակները: Շատ տարօրինակ մարդ էր այդ Ռայկօն: Մթափ ժամանակը լուսն էր, իսկ երբ մի քիչ օղի էր խմում, սկսում էր կոտրտած ու ծիծաղելի ռուսերէնով տաք-տաք ու յամառ կերպով պատմել Սերբիայի մասին՝ ինչ որ մանր-մունր ու անհետաքրքրական բաներ, —կուսակցութիւնների մասին, արմատականների ու թիւքքերի մասին, ինչ որ Բօղեմիչ աղքանունով անպիտան ու սարսափելի մարդու մասին և էլլ ինչ որ մի բանի մասին: Եւ այնքան գովում, փառաբանում էր իր փոքրիկ ու քոնճուտ Սերբիան, որ ամենքը ծիծաղից թուլանում էին ու սկսում էին ձեռք առնել նրան:

—Տէր Աստուած, —զարմանում էր Վանկա Կոստիւրինը: —Մեծ-մեծ խօսում է Սերբիայի մասին, բայց որ հարցնես, ամբողջ Սերբիան հաղիւ այս տառեխի չափ լինի: Որ

թիւրքը ուզի, ամբողջապէս բերանը կը դնի
ու կուլ կը տայ:

— Իկումը դէմ կ'առնի, — առարկում էր
Ռայկօն, քստմնելով բեխերով, կղակով, սուր-
սուր ու մանր աչքերով և առհասարակ իր
ամբողջ փաքրիկ վշիշոտ ու ջլուտ կերպա-
րանքով:

— Կը թքի, դէն կը գցի. կ'ասի՝ ինչ ան-
պիտան բան է եղել:

Ռայկօն կարմրատակում էր, բարկացած
աչք էր ածում բոլորին և կատաղած շպըռ-
առում էր.

— Ե՞նք:

Ու գնում էր իր համարը: Ընկերները
հոհուում էին, իսկ Զիստեակօվը, տխուր-
տխուր ժպտալով՝ մտածում էր, — այ քեզ յի-
րաւի փոքրիկ ու տխուր երկիր՝ կոււրար
ու թոյլ բնակիչներով, ուր միշտ անկարգու-
թիւն է տիրում և ուր ամեն ինչ մանր է
ու ողորմնի, ինչպէս զինուոր ձեացող երե-
խաների խաղը: Եւ խեղճը դալիս էր փոքրիկ
Ռայկօնի վրայ, և սիրտն ուղում էր նրան էլ իր
հետ արտասահման տանէր, որպէս զի այնտեղ
իսկական, լայն ու խելացի կեանք տեսնէր:

Եթէքը կիսով չափ դատարկուելուց յե-
տոյ՝ ուսանողները սկսում էին երգել ու
նուագել և մէջներից մէկին ուղարկում էին

Ռայկօնի յետեից, որ դափ ածելում մասնա-
գէտ էր համարւում: Ռայկօն գալիս էր ու
սկսում էր մռայլ դէմքով դափ ածել, իսկ
աչքերը վառում էին գայլի աչքերի պէս և
այնպիսի սուր հայեացըրով, ինչպէս կրէտի
խայթոցը: Եթէ սկսում էին շատ ուրախա-
նալ, և տաքացած արիւնները սկսում էր եռ
գալ երակներում, վան'կա կօստիւրինը տե-
ղիցը վեր էր թռչում, ուսերը թօթւում էր
ու պարում էր սուսաց ժողովրդական պարը:
Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ ծանրալաշ
ու անշնորհք մարդը զարմանալի թեթև կեր-
պով պարում էր ու վետուրի նման թռչում
սենեակի մէջ, ինչպէս կրնկով կտկտացնում
էր տախտակամածը, ճշում, բզաւում, և ամ-
բողջ սենեակը կարծես պտոյտ էր զալիս ու
գողում նրա ստնածայնից, դաշնակարանի
կլկլան հնչիւններից և դափի որսաղոչ գրմ-
գըմքոցից: Եւ բոլոր նալողների աչքերը փայ-
լում էին, ուսկրները շարժ էին գալիս, և մէ-
կը կամ միւսը քաշւում էր մի անկիւն, յու-
սահատ հրճուանքով թափ տալիս ձեռքը և
կրծքի խորքերից սրտմաշուկ ու քաղցր հա-
ռաչ արձակում: Եւ բոլորը դժերի նման էին
թւում Զիստեակօիին:

Պարը վերջացնելով՝ վան'կա կօստիւրինը
հսկէն ինդրում էր Ռայկօն:

—Դէ, թէ տղայ ես, Ռայլի, ցայց տուր, թէ ինչպէս են պարում ձեզնում: Այսպէս հօչքն կարող:

—Այդպէս չեն կարող, բայց աւելի լաւ կարող են:

—Որ այդպէս է, մի վախեցիր, ցայց տուր: Ես գիտեմ, ձեզնում լաւ են պարում: Ամենքը խնդրում էին, և Ռայկօն, վախեցոտ ու զայրացկոտ հայեացք գցելով շուրջը, դէն էր դնում դափը: Ենաոյ դէմքը վայրագու արիւնարբու արտայալտութիւն էր ստանում, և նա մի քանի տարօրինակ, թափոտ ու ծակող շարժումներ էր անում—կարծես ոչ թէ պարելու էր, այլ խեղդելու, ճանգըռատելու և սպանելու: Այդպէս՝ առանց նուագածութեան՝ լուրջ ու մի քիչ ահռելի արտայալտութեամբ պարելով, նա այնքան նըման էր փոքրիկ վայրենիի, որ ամնեքը քըրքիջ էին բարձրացնում, և նա նորից վիրաւորում էր, սկսում էր հայհոյել ու դուրս էր դնում անհեակից:

«Ի՞նչ կոպիտ մարդիկ են», —մտածում էր Զիստեակօվը, և խեղճը գալիս էր փոքրիկ Ռայկօի վրայ, որ այնքան սասատիկ սիրում էր իր փոքրիկ հայրենիքը:

Վաթսունչորսերորդ համարում լինում էր նաև մի ուսանող, կարուել աղջանունով,

միշտ միատեսակ տրամադրութեամբ, միշտ ուրախ, և փոքր ինչ գոռող, նրա եղած ժամանակ ամեն ինչ փոքր ինչ փոխուում էր,— միայն լաւ երգեր էին երգում, ոչ ոք Ռայկօին ձեռք չէր առնում, և ուժեղ Տօլկաչօվը, որի ոչ ամբարտաւանութեանը չափ կար, ոչ ստորաքարշութեանը, կամակատարութեամբ օգնում էր նրան վերարկուն հազնելիս: Խակ կարուեվը երբեմն դիտմամբ իբր թէ մոռագնում էր նրան բարեւել և ստիպում էր զանազան խաղեր անել՝ վարժուած շան նման:

—Դէ, մաի կառը, բոնի սեղանի ոսքիցը ու բարձրացրու:

Տօլկաչօվը ինքնագոն կերպով բարձրացնում էր սեղանը:

—Դէ հիմի ծոփ այս քսանկօպէկանոցը: Տօլկաչօվը ծոռում էր ու ամաչկոտ կերպով ասում:

—Իսկ հայրիկս կրակքաշիկից օղակ էր շինում:

Բայց կարուեվը արդէն այլևս չէր լսում նրա ասածը և գնում էր խօսելու միայնակ նստած Զիստեակօվի հետ: Զիստեակօվի հետ նա միշտ լուրջ էր լինում ու բժշկի պէս կարեկցօրէն ուշագիր, և խօսելիս մօտիկից ու փաղաքչօրէն նայում էր աչքերի մէջը: Զիստեակօվը էլ խղճում էր նրան և միշտ հա-

մողում էր, որ իր հետ դնայ արտասահման:

—Հը, դնո՞ւմ էք,—հարցնում էր կարուելը:

—Երկու հարիւր քսան կայ: Հարիւր ութուն էլ գեռ պէտք է: Իսկ դուք,—ժըպտում էր Զիստեակօվը:

—Ես՝ չեմ: Դժուար կը լինի ձեր բանը այնտեղ, հոգիս: Ձեր առողջութիւնը...

—Այնտեղի կիման լաւ է:

—Ճիշտ է, բայց աւելի լաւ կը լինէր կրիմ զնայիք...

Զիստեակօվի դունատ դէմքը աւելի և գունատուեց և կոպերը կարմրատակեցին: Կալիծից ու սարսափից գողալով, կարծես թէ սրտիցը պոկում էին իր արտասահմանը, չչնջաց՝ վշտահար ու յուսահատ.

—Ես այստեղ կը մեռնեմ: Կը մեռնեմ: Տէր Աստուած, այնտեղ մարդիկ կան, այնտեղ կեանք կայ, իսկ այստեղ...—նա յուսակտուր թափ տուեց ձեռքը:

—Դէ լաւ, դէ լաւ, —հանգստացնում էր նրան կարուելը: —Որ այդքան ուզում էք, զնացէք, Տէր ընդ ձեզ:

—Այնտեղ, զիտէք, —խանդաղատօրէն չչնջում էք Զիստեակօվը, —այնտեղ Խրիստոնիայում Բեօռնսօնին արձան են կանգնեցրել

կենդանութեան օրով: Նոյնպէս և իբսէնին: Եւ նրանք ամեն օր... անցնում են մօտովը ու տեսնում այդ: Տէր Աստուած: Երանի արժանանայի միայն ոտք դնել այդ հողի վրայ, գէթ մի անգամ չնչել այդ օդը... Կուրծքս թոյլ է: շատ կարելի է, ասում են, թոքախտունեմ: Երանի այնտեղ մեռնէի:

Կարուելը փաղաքչօրէն գգուեց նրա ծունկը:

—Զէք մեռնիլ: Մեղ բոլորիս կը թաղէք: Ինչպէս երեսում է՝ կեանքը կարգին ճմոել է ձեզ: Շատ զղային էք:

—Զղային, —ժպտաց Զիստեակօվը: —Ի՞նչ զղեր, այստեղս է, —նա խփեց կրծքին, —այստեղս է այրել-խորովել ձեր կնանքը:

Եւ սկսեց պատմել, թէ ինչպէս արտասահմանում ամեն ինչ էժան է, և միայն մարդիկ են թանկ, և ոչ թէ այնպէս, ինչպէս Ռուսաստանում, որտեղ ամեն ինչ թանկ է, իսկ մարդիկ՝ էժան:

II

Տարուայ երկրորդ կէսին Զիստեակօվի վիճակն աւելի գժուարացաւ: Ուժը պակասեց, ձախ կողքը սկսեց աւելի յաճախ ցաւել, և դասերին շատ հեշտ էր գրդուում, մանա-

ւանդ որ աշակերտները բթամիտ էին, ծոյլ
ու յանդուգն։ Վաթսունչորսերորդ համարի
ուսանողական կեանքն էլ դէպի վատը փո-
խուեց։ Այդ համարում մի դէպը պատահեց,
որ ամենքը շատ շուտ մոռացան, բայց Զիս-
տեակօվը չը կարողացաւ մոռանալ, որով-
հետև այդ դէպը շատ կսկիծ պատճառեց
սրտին։ Նոյեմբեր ամսին էր. ուժեղ Տօլկա-
չօվը՝ չը գիտեմ ինչու։ կոիւ սկսեց վան'կա
կոստիւրինի հետ ու ապտակեց նրան։ Երե-
կոյ էր, գիշերուայ մօտ էր. ուսանողները
խմբով կանգնած էին բակում. բոլորն էլ
թունդ հարբած էին և պարզ չէին հասկանում
եղածը։

—Ինչու ես խփում, —գոռաց կոստիւ-
րինը։

—Այ թէ ինչու, —ասաց Տօլկաչօվը և
մէկ էլ այնպէս խփեց, որ կոստիւրինը եր-
կուտակուեց, քիչ մնաց վայր ընկնէր, և ա-
տամները արնոտեցին։ Բոլորն էլ յօնքերը
կիտեցին, սկսեցին գոռպոռալ, բայց ոչ ոք
սիրտ չարեց միջամտել, և միայն Զիստեա-
կօվը՝ հիստերիկական ճիչ արձակերով՝ յար-
ձակուեց վիթխարի Տօլկաչօվի վրայ ու ան-
չնորհք կերպով խփեց նրան, այնպէս որ իր
բութ մատը ցաւացրեց։ Յետոյ ինչ որ ծանր
բան՝ փթանոց քարի նման իջաւ գլխին, նա

վայր ընկաւ, իսկ երբ տեղից բարձրացաւ,
բոլորը չը ջապատել էին նրան ու վրայ էին
պրծնում դէպի Տօլկաչօվը, բայց չէին խփում,
այլ միմիայն գոռգոռում էին։ Բայց և այն-
պէս Տօլկաչօվը մի քիչ վախեցաւ ու սկսեց
արդարանալ, աշխատելով մեղքը գցել կօս-
տիւրինի վրայ, որ մի կողմ կանգնած՝ սև
լորձունք էր թքում ձեան վրայ ու ասում։

—Միթէ այսպէս կարելի՞ է, տղերք։

Տաս բոպէից յետոյ Տօլկաչօվին ու կօս-
տիւրինին հաշտեցրին։ Նրանք ձեռք տուեցին
իրար ու համբուրուեցին, իսկ Զիստեակօվը
ձեռները իրար խփեց ու լաց եղաւ ցաւից,
կոկիծից ու զայրոյթից։

—Տէր Աստուած, համբուրունւմ է իրան
ձեծողի հետ։ Այդքան էլ ստորութիւն։

—Քիզ ինչ, —ուսն ի վեր հարցրեց Տօլ-
կաչօվը։ —Ուզում ես, բռնեմ քեզ, կտրովն
այն կողմը ցցեմ։

—Օտարազգին, —արհամարհաբար ասաց
կոստիւրինը, ու ամենքը գոռգոռալով ու ծի-
ծաղելով՝ գնացին դէպի դարպասը, իսկ Զիս-
տեակօվը բարձրացաւ իր սենեակը, պառկեց
ու այդպէս պառկած երկար ժամանակ լալիս
էր մութ տեղը։ Բռնութիւնը, անարդարու-
թիւնը թուխապի պէս կանգնած էին նրա
գլխին, և հեռաւոր, անմատչելի դրախտ էին

թւում նրան օտար, լուսաւոր երկիրները՝ «Երանի մի տեսնեմ ու թէկուզ իսկոյն մեռնեմ», — մտածում էր նա սրտմաշուկ կարօտով:

Միւս օրը Կոստիւրինը ամաչեց իր արածից ու զնաց Զիստեակօվի սենեակը, ուր մինչ այդ երբէք ոտք չէր դրել: Ներս մըտնելով՝ նա երկար ժամանակ շփոթուած աչք էր ածում չորս կողմը ու գովում սենեակը:

— Ի՞նչ լաւ է այստեղ: Կարծես կոյսի խուց վնի, — ասաց նա ու յանկարծ սկսեց լաւ և մի կողմ ծոռւած երկար բեխերի վրայով սկսեցին զլորուել ու թափուել հիւրանոցի կեղտոտ սեղանի կարմիր մահուդի վրայ արցունքի խոչոր ու վճիտ կաթիրներ: Իսկ մի շաբաթ անցած ամեն ինչ մոռացուեց, և Տօլկաչօվը նորից սկսեց հիացնել ամենքին իր մկանների ոյժով, բայց Զիստեակօվը չէր կարողանում այլ ևս առանց սարսափի նայել նրա կարմիր ու հաստ զզին ու ահագին բըռունցքին և միշտ նրաներկայութեամբ այնպէս թոյլ ու անօդնական էր զգում իրան, ինչպէս հաւիք ճուտը բազէի առաջ: Կոպիտ, անասնական ոյժը խրոխտաբար կանգնած էր նրա առաջ, և չը կար մէկը, որ պաշտպանէր նրան: Այնուամենայնիւ այլ ևս ճեռք չէր տալիս Տօլկաչօվին, սակայն սա առաջին անգամը

արհամարհական ու անկեղծ քրքիջով ընդունեց այդ և այնուհետև յաճախ ասում էր նրան.

— Հը՞, օտարազգի, չուտ ևս արտասահման ջհաննամուելու: Շնուտ արա, թէ չէ մի օր սատանան ականջիս կը փչի, ու կը բըռնեմ, կողքիդ սակորները կը հաշւեմ:

Զիստեակօվը զարհուրում էր. բան չէր ասում ու մտածում էր ինքն իրան՝ «մինչ անգամ չի էլ հասկանում, որ անվայել բան է խօսել մէկի հետ, որ իրան ձեռք չի տալիս»: Իսկ Տօլկաչօվը հոհուում էր.

— Մի վախեցիր. կատակ եմ անում: Ինչիս է պէտք քեզ պէս շան-ձրազը:

Եւ ամենքը ազատ շունչ էին քաշում, որովհետև վախենում էին, որ Տօլկաչօվը ճիշտ որ կը բանի ու կը ծեծի նրան, և երբեմն սկսում էին համոզել Զիստեակօվին, որ հաշուիք հետք:

— Իսկապէս շատ լաւ տղայ է, — ասում էին կիսով չափ անկեղծօրէն, որովհետև յետեկից էլ սիրտ չէին անում ճիշտ խօսել Տօլկաչօվի մասին և նոյն իսկ չէին համարձակւում անկեղծօրէն մտածել նրա մասին: Եւ միմիայն կարուեկն ասաց, որ հաւանում է Զիստեակօվի արածին, ու գրեթէ ոտքը կըտրեց վաթսունչորսերորդ համարից:

Զիստեակօվի փողը արդէն հասել էր երկուհարիւր իննսունի, և յոյսկար, որ գարնանամտին, ապրիլին, չորս հարիւրը կը լրանայ: Աւելի էլ կ'ունենար, բայց մի վաճառական դարձեալ վարձը կտրեց, տասը ուռւրի պակաս տուեց, թէն խոստացել էր տալ, և բայցի այդ՝ Զիստեակօվը տասնհինգ ուռւրի տուեց Ռայկօին, որ տանից զրեթէ ոչինչ չէր ստանում և ընկերների հաշւով էր ապրում (նրա սենեակավարձի մասը Վան'կա Կոստիւրինն էր տալիս): Այդքան փող ունենալով գրապանումք՝ Զիստեակօվը աւելի հանգիստ էր ու վստահ: Ամբողջ երեկոներ սենեակումը նստած երազում էր, թէ ինչպէս հիանալի կ'ապրի արտասահմանում, և արդէն սկսել էր մանր-մունր բաները դարսել ճանապարհ համար: Եւ երբ այդ իրերը դարսում էր, սիրտը լցուում էր մեղմ ու աղբիւրի ջրի նման վճիտ թախիծով, ինչ որ հեռաւոր, անյայտ ու քաղցր բանի կարօտով, և միշտ թըւում էր, թէ մոռանում է վերցնել հետը ինչ որ մի բան, ինչ որ սաստիկ կարենոր և թանկագին բան, առանց որի շատ անախորժութիւնների է հանդիպելու արտասահմանում:

Ըսկերներին սկսել էր աւելի մեղմ վերաբերուել, չէր բարկանում վրաները, այլ միմիայն խղճում էր նրանց: Խղճում էր, որ

մնում են Տօլկաչօվի հետ, խղճում էր, որ այնքան շատ խմում են, և որ նրանց կեանքն էլ ուրիշների կեանքի նման դժգոյն է լինելու և տաղտկալի, ու ոչինչ չի յաջողելու նրանց այն լաւ բաներից, որոնց մասին երազում են երեխն: Վայրենի երազի նման օտարոտի, քաօսային, մղձաւանջային կեանքը կլանելու է նրանց, ինչպէս լափել է հազարաւոր ուրիշներին, և ի գուրք կ'անցնեն նըրանց ջանքերը՝ մի ուրիշ, լաւագոյն կեանք ստեղծելու: Եւ մանաւանդ խղճում էր եռանդուն և խիզախ կարուեվին, որ ուզում էր զլխովը պատը քանդել ու վերջին ժամանակները սաստիկ մռայլացել էր ու դիւրագրգիռ դարձել:

— Արի գնանք, — համոզում էր Զիստեակօվը:

— Ո՞ւր, — չէր հասկանում կարուեվը:

— Արտասահման, էլի:

Կարուեվը գրգռուած պատասխանեց.

— Ես էլ կարծում եմ՝ ինչ է խսում, — բայց իսկոյն զսպեց իրան ու քաղաքավարի աւելացրեց. — ի հարկէ, ինչնել էք մնում, գնացէք: Կը բժշկուէք, ջղերդ կը հանգստացնէք: — Ուզում եմ ամառը Շվեյցարիայուս ապրել:

— Շատ լաւ կ'անէք, — գովեց կարուեվը

և քաղաքավարի մնաս բարե ասաց, ինչ-
պէս մի անձանօթ մարդու; Ինքն էլ ուր որ
գնալու էր առժամանակ:

Մարտի մէջերքին վաթսունչորսերորդ
համարի տէրերից մէկի, Պանօվի, անուանա-
կոչութեան օրն էր: Նա հրաւիրել էր նաև
Զիստեակօվին: Արդէն ձիւնը վեր էր կացել,
և սահնակներին փոխարինել էին անւաւոր
կառքեր: Երբ Զիստեակօվը դուրս եկաւ վեր-
ջին դասից, գարնանամտի քաղցր թարմու-
թիւն ու ջերմութիւն խփեց երեսին: «Քիչ է
մնացել մինչեւ գնալս», — մտածեց նա, և սիր-
ութ թոշունի նման թրթուաց, և հոգու մէջ
ծագեց ինչ որ տարութիւն, ինչ որ կակիծ,
ինչպէս ծագում է առհասարակ մի տեղից
երկար ժամանակով հեռացողների սրտում, և
խեղուեց համատարած բերկրութեան և ցըն-
ծութեան ալիքում:

Վերենում տարածում էր գիշերային սև
երկինքը, և երկնքի երեսով խորհրդաւոր կեր-
պով սլանում էին սպիտակ ամպերի ահա-
զին քուլաններ: Որպէս վիթխարի սպիտակ
թոշուններ: Մի ուղղութեամբ էին սլանում
նրանք, և նրանց արագ ու անձայն թոփչքը
կարծեք մի հզօր կոչ լինէր նոյնպիսի աղատ
ու երջանիկ թոփչքի: «Քիչ է մնացել, քիչ» —
մտածում էր Զիստեակօվը:

Նրա դալուց շատ առաջ էին հաւաքուել
հիւրերը վաթսունչորսերորդ համարում: Ար-
դէն թէյ ու օղի խմել էին և պատրաստում
էին երգելու: Զիստեակօվը յոդնած նստեց
մի անկիւնում դարսած վերարկուների վը-
րայ ու սկսեց բարեաշակած տիրութեամբ
դիտել իր ընկերներին, — մի ամիս էր մնա-
ցել ընդամենը, և նա հեռանալու էր նրան-
ցից երկար ժամանակով, նոյն խմկ ընդ միշտ:
Խմբովին երկու ուսանողական երգ երգեցին,
խմկ յետոյ առաջ անցան երեք հոգի՝ կօճակը-
վատօրիայի աշակերտունի Միլայլօվան, որ
լաւ սօպրանո ձայն ունէր, ինքը տօնատէրը,
որ երգում էր ուժեղ ու սիրուն բաս ձայնով,
և մի շկահեր ուսանող, որ տենօր էր: Լոռու-
թիւն տիրեց, և բասը սկսեց երգել միայնակ
ու դանդաղ, և Զիստեակօվը ցնցուեց, — այն-
քան անակնկալ սիրուն էր երգը.

Поко—коиной но-օ-очи вс'емъ уста-
а-вшимъ...

(Բարի գիշեր բոլոր յոդնածներին...)

Հանդիսաւոր անդրբութեամբ, վերմ
թախիծով ու սիրով էին համակուած այդ
վեհ և հզօրապէս զուսպ հնչիւնները, — ինչ
որ մի մեծ ու մութ էութիւն, որպէս ինքը
գիշերը, ինչ որ մի ամենատես, ուստի և
կարեկցող ու անհունապէս տիսուր էութիւն,

հանդարտ պարուրում էր երկիրը իր քնքոյշ քօղով, և մինչև երկրի ծայրագոյն եզրերը պէտք է հասնէր նրա հզօր ու զուսպ ձայնը: «Բայց, Տէր իմ, մեր մասին է այդ երգը, մեր մասին», —մտածեց Զիստեակօվը և ամբողջ մարմնով ձգուեց դէպի երգեհները:

Եւ երբ մարեց վերջին հնչիւնը, մէջ մտաւ հնչուն տենօրը ու կրկնեց նոյն խօսքերը, —կարծես թէ երկիրը արձագանք տուեց այդ կարեկից ու քաղցր խօսքերին, և աղաչանք էր հնչում նրա աղօթող ձայնում:

— Покойной но-о-очи всѣмъ уставшимъ,
Весь день свой отдыха не знаяшимъ,
Трудомъ купившимъ свой по-о-кой!

— Весь день свой отдыха не зна-а-
вшимъ...
Եւ նոյն վեհ վշտով ու անդորրութեամբ
սփռում էր տարածութեան մէջ խաւարա-
կերպ, առնական բար.

— Весь день свой отдыха не зна-а-
вшимъ...
Եւ նոյն վեհ վշտով ու անդորրութեամբ
սփռում էր տարածութեան մէջ խաւարա-
կերպ, առնական բար.

— Весь день свой отдыха не зна-а-
вшимъ...
Եւ նոյն վեհ վշտով ու անդորրութեամբ
սփռում էր տարածութեան մէջ խաւարա-
կերպ, առնական բար.

— Весь день свой отдыха не зна-а-
вшимъ...
Եւ նոյն վեհ վշտով ու անդորրութեամբ
սփռում էր տարածութեան մէջ խաւարա-
կերպ, առնական բար.

— Трудомъ купившимъ свою ой по-о-
кой!...

(Որոնք աշխատանքով են գնել երանց հանդիսաբ...)

«Տէր իմ, Տէր իմ, այդ սա է երգում», —
մտածեց Զիստեակօվը, դիտելով օրիորդի գու-
նատուած դէմքը: «Օ՛, հոգեակ, մեր մասին
է այդ, մեր մասին»:

Եւ երեք ձայները խառնուելով իրար,
թափանցելով միմեանց մէջ, ի մի ձուլուելով
և մի վեհ ու վշտալի ներդաշնակութիւն կաղ-
մելով, կրկնեցին.

— Покойной ночи всѣмъ уставшимъ,
Весь день свой отдыха не знаяшимъ,
Трудомъ купившимъ свой по-о-кой!

Յետոյ ուրիշ տիուր երգեր երգեցին,
բայց Զիստեակօվը այլևս ոչինչ չէր լսում, և
նրա ամբողջ էութիւնը թրթուում էր անհուն
կարեկցութիւնից դէպի ինքը, որ ամբողջ օրը
աշխատում էր անխոնջ, և դէպի ինչ որ մի
անդէմ, մեծ էակ, որ կարիք ունէր անդոր-
րութեան, սիրոյ և մեղմ հանգստի:

Նրան սթափեցրեց Ռայկօ Վուկիչի շուր-
ջը սկսուած ուրախ ու աղմկալից խօսակցու-
թիւնը: Դարձեալ ձեռք էին առել Ռայկօին,
իսկ նա՝ սովորութեան հակառակ՝ լուռ էր, և
միմիայն կրէտի խայթոցի պէս սուր աչքերն ա-
րագ-արագ անցնում էին մէկի վրայից միւսին,
և շարժուում էր երկնիւղ, ցցամազ կզակը:

—Ասա տեսնենք, Ռայկօ, —հարցնում էր
վանկա կոստիւրինը, —ձերոնց բոլորի քը-
թերն էլ կեռ են քոնի նման:

Ռայկօն դանդաղ կերպով պատասխանեց.

—Ես քանի օրերս սահմանի վրայ սպա-
նել են հօյօվիչ անունով մի սերբի: Թիւր-
քերն են մորթել:

Եւ ամենքը պարզ երեակայեցին այդ
հօյօվիչ ազգանունով մորթուած սերբին, որի
մեռեատիպ գեղին քիթը կեռ է Ռայկօի քթի
նման, և որի կոկորդի վրայ երեւմ է մի
լայն ու սկ վէրք: Տպաւորութիւնը անա-
խորժ էր, և կոստիւրինը շինծու ծիծաղով
ասաց.

—Ի՞նչ մեծ բան է: Տեղումը շատ կան:

Ռայկօն քստմեց, գունատուեց, և երկ-
ճիւղ կզակի փշերը դողացին: Եւ երբ սկը-
սեց խօսել, ձայնը մետալական խիստ հըն-
չիւն ունէր:

—Դու խարերայ ես: Ինչու ես ոռւսաց
ժողովրդական պար պարում: Դու հայրենիք
չ'ունես, տուն չ'ունես: Դու խող ես:

Պատասխանը Զիստեակօվը տուեց, կար-
ծես թէ նրան էր ուղղուած յանդիմանու-
թիւնը: Խուլ ձայնով և հանգիստ ասաց.

—Իսկ դու, Ռայկօ, սիրում ես Սերբիան:

—Իհարկէ սիրում եմ:

Ամենքը լուս էին, և Ռայկօն վերցրեց
հացի կոր դանակը ու թափ տալով օդի մէջ՝
վայրենի կերպով դուաց.

—Կը սպանեմ: Ա՛խ, եթէ իմանաք՝ նրբան
սաստիկ է զայրոյթս: Ի՞նչպէս կոկծում է
սիրոս: Ախ, ինչպէս կոկծում է սիրոս...

Ուժգին կերպով դանակը նետեց դէպի
պատը, և դանակը տափակ կողմով դիպաւ
պատին ու զբնգալով յետ թռաւ: Ռայկօն
առանց ընկերների վրայ նայելու դուրս եկաւ
սենեակից:

Կէս ժամ անցած՝ Զիստեակօվը դնաց
նրա յետեից. Նրա խեղճը գալիս էր փոքրիկ
Ռայկօի վրայ, որ այդքան սաստիկ սիրում
էր իր փոքրիկ, իրան այդպէս ժահացու կոկիծ
պատճառող հայրենիքը: Երբ նա գեռ անցնու մ
էր երկարուկ, կիսամտութ միջանցքով՝ մոլո-
րուելով միակերպ, միանման դուների մէջ,
ականջին հասան ինչ որ օռնոցի կամ օգնա-
կոչի նման օտարուաի հնչիւններ: Դռներից
մէկի վրայ կաւիճով գրուած էր «Ռայկօ
Վուկիչ», և այնտեղից էին գալիս այդ տա-
րօրինուկ և այժմ արդէն բարձրաձայն հըն-
չիւնները: Զիստեակօվի թիմթխկոցին պա-
տասխան չ'եղաւ, և նա ներս մտաւ՝ պատու-
հանի լուսաւոր ֆօնի վրայ աղօտ կերպով
որոշելով Ռայկօի փոքրիկ, սրածե կերպա-

րանքը, — մութ սենեակի պատուհանում նըստաձ՝ Ռայկօն երգում էր արտասովոր բարձր կոկորդային ձայնով:

— Ռայկօ, — կամաց ձայն տուեց Զիստեակօվը:

Բայց Ռայկօն չէր լսում: Նա չը լսեց դռան թրիկոցը, չը լսեց Զիստեակօվի ոտնաձայնն ու իր անունը, նա երգում էր՝ աչքերը յառած դիմացի մրոտած բարձր աղեւսէ պատին: Հեռաւոր հայրենիքի մասին էր երգում: Նրա խուզ տանջանքները, որպացած մայրերի ու կանանց արցունքներն էր ողբում: աղջում էր իր հեռաւոր հայրենիքին՝ տանել իրան, փոքրիկ Ռայկօին ու թաղել հայրենի հողում և երջանկացնել իրան՝ հնարաւորութիւն տալով մահից առաջ համբուրելու իր ծննդավայրի գետինը. կատաղի վրէժինդրութեան մասին էր երգում: սիրոյ և կարեկցութեան մասին էր երգում դէպի յաղթուած եղայրեները, սերբ Բօյօվիչի մասին, որի կոկորդի վրայ լայն ու սկ վէրք է երևում, նրա մասին, թէ ինչպէս սաստիկ կակծում է փաքրիկ Ռայկօի սիրտը, որ ինքը անջատուած է մայր հայրենիքից, իր թըշուառ, բազմատանջ հայրենիքից:

Զիստեակօվը չէր հասկանում երգի բառերը, բայց լսում էր հնչիւնները, իսկ այդ

հնչիւնները՝ վայրենի, բիրտ ու տարերային, ինչպէս մայր երկրի հառաջները, և աւելի նման անտէր մնացած չան ոռնոցի, քան մարդկային երգի, տոգորուած էին այնպիսի անել թախիծով ու կծու ատելութեամբ, որ առանց բառերի էլ պարզ կերպով երեսում էր երգչի արիւնլուայ սիրտը:

Ռայկօի ձայնը մարեց՝ մի բարձր, զայրալից զիլ հնչիւն արձակելով, և երկու ընկերները երկար ժամանակ մնացին այդպէս լուռ նստած: Յետոյ Զիստեակօվը աւելի մօտեցաւ Ռայկօին ու տեսաւ գայլի աչքերի նման վառուող չոր ու զայրագին աչքերը:

— Ռայկօ, — ասաց, — վազուց է՝ հայրենիքդ չես տեսել: Գնա տես. ևս փող կը տամքեզ: Աւելորդ փող ունեմ:

— Տուն, կայ այնտեղ, — մտախոհ ասաց Ռայկօն:

— Ի՞նչ առան:

— Տուն, էլլի: Ջես իմանում՝ տունն ինչպէս է լինում: Եւ երբ սայլը անցնում է մօտով, ճռում է, վայ-վայ է անում:

— Ա՛ռ այս փողը, Ռայկօ:

— Մի խանգարի ինձ, — ասաց Ռայկօն:

— Մի խանգարի, ինդրեմ: Գնա ձերոնց մօտ: Ինձ մենակ թող: Սիրտս այրուում է կոկիծից:

Բայց Զիստեակօվը չը գնաց ընկերների

մօտ, այլ բարձրացաւ իր սենեակը և մըթնում Ռայկօի պէս նստեց պատուհանում ու սկսեց նայել երկնքին, որի երեսին ինչ որ լու բան կարդաց այսօր։ Էլի այնպէս խորհրդաւոր ու լուռ սահնում էին՝ վիթխարի սպիտակթռչունների նման ամմերը, և նրանց արանքին վիճերի պէս սեին էր տալիս անյատակ երկինքը, բայց օտար և սառն էր այժմ այդ երջանիկ թռիչքը և ոչինչ չէր ասում մտազբաղ մարդուն։

— «Շուտով ես էլ այդպէս կը թռչեմ»,
— մտածում էր Չիստեակօվը, աշխատելով
նորոգել մի ժամ առաջ զգացած ազատութեան ու թեթեութեան զգացմունքը, բայց կրծքումը ծագում էր մի ուրիշ, անորոշ ու զօրեղ զգացմունք, ծագում էր ու սաստկանում և թրթում ու թրպուտմ այնտեղ, ինչպէս թռչունը վանդակում։ Եւ նա հասկացաւ, թէ ինչ էր այդ. նա հասկացաւ, որ ինքն էլ Ռայկօի պէս սաստիկ ուզում էր երգել և նոյնպէս երգել հայրենիքի մասին։ Եւ նա ուրախացաւ, որ հասկացաւ այդ, ժպտաց և բոլորովին պարզ զգաց կրծքումը փակուած աղաչանիքի ձայները և ջերմ ու հնչուն արցունքները։ Տերանը բաց արեց, բայց մտածեց, որ յանկարծ մէկը կարող է ներս մտնել ու տեսնել իրան երգելիս, և

ամաչելով այդ բանից՝ դուռը կողպեց բանալիի երկու պտոյտով։ Եւ դէպի պատուհանը վերադառնալիս, չը գիտեմ ինչու, ոտների ծայրերի վրայ էր գընում։

— Դէ, — ասաց ինքն իրան ու սկսեց երգել ինչ որ մի բան առանց բառերի — և այնքան գծուծ, այնքան անվճռական էր արձակած ու ողորմելի զղաձկութեան մէջ մեռած ձայնը, որ սարասի եկաւ վրան։ «Պէտք է խօսքեր գտնել, առանց բառերի չի կարելի», — շտապեց արդարացնել նա ինքն իրան ու սկսեց բառեր փնտրել, և շատ բառեր անցան մաքովը, բայց չը կար նրանց մէջ և ոչ մէկը, որ բղինէր հայրենասիրութեան զգացմունքից։ Նա լարեց ամբողջ յիշողութիւնը, ամբողջ երեսակայութիւնը, փինտրեց անցեալում, փնտրեց կարդացած զրքերում — և շատ կային հնչուն ու գեղեցիկ խօսքեր, բայց չը կար և ոչ մէկը, որով կարողանար տանջուող զաւակը զիմել իր մայրհայրենիքին։ Նա շատ լաւ զգում էր այդ խօսքը, նա տեսնում էր այդ խօսքը և զիտէր, թէ ինչով է զանազանուում ուրիշ խօսքերից, — միւս բոլոր խօսքերը տափակ են ու աղքատ, ինչպէս եկեղեցու դռան մուրացկանները, իսկ այդ խօսքը թաթախած մէջ, ջերմ է, ինչպէս

հրաշէկ ածուխը, և պայծառ, ինչպէս երկնային հուրը,—և այդ խօսքը պտտում էր լեզուի ծայրին, բայց չէր կարողանում գտնել: Եւ այնպէս դատարկ ու աղքատ զգաց իրան, ինչպէս յնտին, ամենայետին մուրացկանը, որի հոգին չոր է ու ցամաք, ինչպէս իրան նետուած ողորմութիւնը:

—Տէր Աստուած, Տէր Աստուած,—ինչպիսի բան է այս: Բայց չէ որ ես լաւ մարդ եմ, լաւ մարդ:

Եւ մտածեց, որ աւելի շուտ կարող է գտնել վիճարածը, եթէ սկսի գրել: Դողդոջուն ձեռներով կուրատելով լուցկիները՝ վասեց մոմը, կատաղաբար վայր գցեց սեղանից գերմաներէնի դասագիրքը, մի թերթ թուղթ գրեց առաջը ու զլուխը կախ զցած՝ խոր մտածմունքի մէջ ընկաւ: Եւ ձեռքը՝ խզբղւով ու անվճռական կերպով՝ գրեց.

«Հայրենիք»:

Ու կանդ առաւ: Ու աւելի հաստատ կերպով կրկնեց.

—Հայրենիք:

Ու արագ-արագ, խոշոր տառերով վերջացրեց.

—Ներիբ ինձ:


Չիստեակովը նայեց իր գրածին և երեսնիվայր ընկաւ թղթի վրայ ու լաց եղաւ կա-

րեկցութեան զգացմունքից դէպի հայրենիքը, դէպի ինքը, դէպի բոլոր աշխատաւորները, որոնք չը գիտնի, թէ ինչ է հանգիստը: Եւ սարսափ զգաց, որ կարող էր հեռանալ հայրենիքից երկար ժամանակով, նոյնիսկ ընդմիշտ, ու մեռնել այնտեղ, օտար երկրում, և մարող լսողութեամբ ականջ գնել խորթ ու օտար խօսքերի: Եւ հասկացաւ, որ չի կարող ապրել առանց հայրենիքի ու չի կարող երջանիկ լինել, մինչ թշուառ է հայրենիքը, և այդ նոր զգացմունքի մէջ կար հզօր բերկրութիւն և հզօր, տարերային, հազարայն վիշտ: Այդ զգացմունքը խորտակեց այն շղթաները, որոնց մէջ տառապում էր նրա հոգին, ի մի ձուլեց նրա հոգին իր անյայտ, բիւրանձն, բազմատանջ եղքօր հոգու հետ, և կարծես հազարաւոր հրեղէն սրաեր երերացին նրա հիւանդուտ, ցաւատանջ կըրծում: Եւ ջերմ արցունք թափելով, ասաց.

—Ա՛ռ ինձ, հայրենիք:

Իսկ ներքեսում նորից սկսեց երգել Ռայլօն, և վայրենօրէն աղատ ու անվեհեր էին զայրագին ու վշտու հնչիւնները նրա երգի:

et de la peste. Apres esto il a fait plusieurs
voyages en France et au Portugal. Il a
ete nomme au service de l'ordre du Temple
et a ete fait chevalier de l'ordre de Saint-Jean
de Jérusalem. Il a ete nomme au service de
l'ordre du Temple et a ete fait chevalier de
l'ordre de Saint-Jean de Jérusalem. Il a ete
nomme au service de l'ordre du Temple et a ete
fait chevalier de l'ordre de Saint-Jean de Jérusalem.
Il a ete nomme au service de l'ordre du Temple et a ete
fait chevalier de l'ordre de Saint-Jean de Jérusalem.
Il a ete nomme au service de l'ordre du Temple et a ete
fait chevalier de l'ordre de Saint-Jean de Jérusalem.
Il a ete nomme au service de l'ordre du Temple et a ete
fait chevalier de l'ordre de Saint-Jean de Jérusalem.
Il a ete nomme au service de l'ordre du Temple et a ete
fait chevalier de l'ordre de Saint-Jean de Jérusalem.



ՀՀ Ազգային գրադարան



NL0310523

ԱԵՐ ԹԱՐԳԱՎԱՅԻԹԻՇՆԵՐ

1. *Լեհ ՏՈՂ ՄՅՈՑ*. Յարւթին . . . 1 n. 50 կ.
2. *ԱՐԳԵՆՍ ԴՕԳԻ*. Ֆրօմոն կրամքը
և նիստէր տևող . . . 1 n. —
3. *ԱՐԳԵՆ. Դ ԴՕԳԻ*. Ֆրօմոնի դրբ.
Կորմա սր և առաւորս անօլիվ . . . — 3 կ.
4. *Վ. ՓԼՈՒՄ Մ ԴՐՈՒ*. Վլրա մատ.
5. *ՀԵԼԻԲ 10 ԽԵԿ*. Ակւամայ մար-
դումագայ . . . 1 n. —
6. *ԴԷՇՐԻ ԲՐԱՆԴԻՍ*. Բանանանդը
և հերոսը . . . — 10 կ.
7. *Վ. ԼՈՒՆԿԵՎԻՀ*. Պատիկէ բոյ .
չափիկէ . . . — 25 կ.
8. *ԺԱՅ ԲԱՑԻՌԸ ԼՈՎԼԻ*. . . . — 5 կ.
- 10 կ.

Գրագութեա ռատ ներուա ծախում է նուա.

- 9. *ՀԵՆԿԵՎԻՀ*. Առանց զտւա-
նանքի. Մարդ. Բանելինից
8. Յովշ. Հափեան և Ե. Թա-
ղի մնուր ան 1 n. 25 կ.
-